ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏԹՈՒՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՔՆՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 17-ՆԻՍՏԸ

17.03.2025թ. ք. Վանաձոր

2025 թվականի մարտի 17-ին Վանաձորի համայնքապետարանի նիստերի դահլիճում տեղի ունեցավ Վանաձոր համայնքի ղեկավարի 2025 թվականի մարտի 7-ի թիվ 618 որոշմամբ ստեղծված հանձնաժողովի նիստ՝ մասնակցային բյուջետավորման գործընթացի շրջանակում ստացված առաջարկների նախնական գնահատման և ծրագրին համապատասխան առաջարկների քվեարկության փուլ տեղափոխման վերաբերյալ:

Մասնակցային բյուջետավորման գործընթացի շրջաակներում սահմանված ժամկետում ստացվել է թվով 17 ծրագրային առաջարկ, որոնցից 6-ը, նախնական գնահատման արդյունքում, համապատասխանելով գործընթացի չափանիշներին, տեղափոխվեցին քվեարկության փուլ.

1. Վանաձոր համայնքի հասցեների տեղեկատվական համակարգի բարեկարգման ծրագիր
2. Երկու խաղահրապարակի կառուցում Գուգարք գյուղում
3. Հեծանվային ուղիների կառուցում
4. Skate Park-ի կառուցում Վանաձորի Սայաթ-Նովայի անվան քաղաքային զբոսայգում
5. «Սպորտային -խաղահրապարակի կառուցում» Շահումյան գյուղում
6. Շահումյան բնակավայրում ֆուտբոլի դաշտի վերակառուցում

Ծրագրային առաջարկներից 11-ը՝, Գուգարք բնակավայրի փողոցների լուսավորություն, Նոր՝ավելի անվտանգ ճանապարհ Բաղրամյան պողոտայի բարեկարգման ծրագիր, Ճանապարհաշինություն Վանաձոր-Դարպաս միջհամայնքային ճանապարհի կապիտալ վերանորոգում, Ջրամբարի կառուցում Դարպասում, Շահումյան բնակավայրի մանկապարտեզի հիմնանորոգման առաջարկ ծրագիր, Բացօթյա հանրային թատրոն և կինոթատրոն Վանաձորում , Կանաչ քաղաք իմ Վանաձոր չտեղափոխվեցին քվեարկության փուլ՝ սահմանված չափանիշներին չհամապատասխանելու, առաջարկված ծրագիրը կրկնվելու և այլ հիմքերով, որոնց վերաբերյալ առցանց ծանուցվել են առաջարկները ներկայացնող բնակիչներին:

Հանձնաժողովի նախագահ՝ Հ. Վիրաբյան

Քարտուղար՝ Ա. Խաչատրյան